

16052

169

891.99

7 - 50

169

Ս. ՊԵՏՐՈՍԵԱՆ

ԳՐՈՒԱԳՆԵՐ

ՎԱՐԴԱՆԱՅ ԴԻՑԱԶՆԵՐԳՈՒԹԵՆԷՆ

(Երեք արարուած)



891.99

Պ-50

1929

Տպգր. Ա. ՍՏԵՓՈՆԵԱՆ, Ադերս.

20 03

Ա. ՊԵՏՐՈՍԵԱՆ

391.99

7-50

us

ԴՐՈՒԱԳՆԵՐ

ՎԱՐԴԱՆԱՅ ԴԻՑԱԶՆԵՐԳՈՒԹԵՆԷՆ

(Երեք արարուած)



9089

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Ա. ՍՏԵՓԱՆԵԱՆ
ԱՂԵՐՍԱՆԴՐԻԱ

1929

ԱՆՁԻՆՔ

ՇՈՒՇԱՆԻԿ (Վարդանի ալջիկը)
 ՎԱՐԴԱՆՈՅՇ (Վարդանի »)
 ԱՐՏԱՆՈՅՇ (Անգղ գիւղէն Լեւոնի աղջիկը)
 ԱՍՏՂԻԿ (Մոկացի Արսակ նախարարի աղջիկը)
 ՆՈՒՆԻԿ (Սպասունի)
 ԾԵՐՈՒՆԻ ՄԸ ԵՒ ԻՐ ՈՐԴԻՆ
 ԱՆԱՀԻՏ (Հայրենիքի պահապան ոգին)
 Ա. ԶՕՐԱԿԱՆ
 Բ. »

(2562
 47)

21243-60

ԱՐԱՐՈՒԱԾ Ա.

(Տեսարանը կը ներկայացնէ նախագաւիթը Վարդանի այն ջաղաւարին կամ վրանածէ բնակարանին՝ ուրկէ մեկնած է: Տաղաւարին դուռը, որ նախագաւիթին ներքին նակար կը գտնուի, զարդարուած է՝ 3 հայկական դրփոցներով, որոնցմէ մին Շուշանիկի ձեռագործն է՝ «Հայ Բանակին» վերնագրութեամբ: Նախագաւիթին աջ ու ձախ կողմերը կան մուտքեր, նստարաններ եւ կանաչազարդ կամ ծաղկազարդ բուփեր:)

(Շարական ՆՈՐԱՀՐԱՇ)

ՏԵՍԻՆ Ա.

ՇՈՒՇԱՆԻԿ ԵՒ ՎԱՐԴԱՆՈՅՇ

ՎԱՐԴ. — Վերջապէս գնաց մեր անուշիկ հայրիկը, Շուշանիկ, արդեօք երկինք պիտի շնորհէ՞ մեզ նորէն՝ զինքը տեսնելու եւ համբուրելու բաղդը... սե սե մը տածու՞նէր այս պահուս կը պաշարեն միտքս... կ'ուզեմ վանել զանոնք, բայց ինչպէս... չարագուշակ նախազգացութիւններ կը վրդովեն ամբողջ էութիւնս:

ՇՈՒՇ. — Սիրելի՛ քոյրս, հանդարտ եղի՛ր: Բարին Աստուած կը պահպանէ մեր քաջ հայրիկին կեանքը. չէ՞ որ Ազգին համար Կոռնէլիւ կ'երթայ. չէ՞ որ նոյն իսկ մեր Ս. Կրօնին եւ հաւատքին պաշտպանութեան համար պիտի պատերազմի. յոյսերնիս չկտրենք Աստուծմէ, որ կարող է վերադարձնել մեր սիրելի Հայրիկը՝ այս անգամ ալ փառաւոր յաղթանակով մը:

ՎԱՐԴ.— Է՛հ, թո՛ղ Աստուած լսէ ձայնդ և մեր օրոտին բաղձանքները կատարէ. մե՛ծ է անոր ողորմութիւնը, կը հաւատամ. թո՛ղ Ան պաշտպան և զօրավիգ ըլլայ մեր քաջազուն հայրիկին և իրեն հաւատարիմ գինակիցներուն... Խեղճ մայրիկս, հիմայ ո՞վ պիտի մխթարէ զինքը՝ այս բաժանման վշտին խորութեանը մէջ:

ՇՈՒԾ.— Մենք, Վարդանո՛յշ, մենք պիտի մխթարենք անոր տխրամած և վշտաբեկ սիրտը և պիտի ջանք անոր յոյսի ճրագը միշտ վառ պահել: Չէ՞ որ մեր Հայրիկն ալ իր վերջին հրաժեշտի համրոյրը մեզի տուած առնէ՝ յանձնարարեց աղօթել իրեն համար և մեր մայրիկին քովէն չրաժնուիլ բնաւ:

ՎԱՐԴ.— Լա՛ւ կ'ըսես, Շուշանի՛կ, մեր պարտքն է, այո՛, մեր մայրիկին յոյս ներշնչել՝ ջանալով որքան կարելի է ծածկել մեր վիշտը. բայց միթէ կարելի է վայրկեան մը հեռացնել մեր միտքէն մեր սիրելի Հայրիկը և Արշա՛իրը, ա՛յն որ Հայրիկին սիրտը կը կրէ և անոր աջ բազուկն է: Ախ, ե՞րբ պիտի լսենք անոնց ողջամբ և յաղթանակով վերադարձին աւետիսը:

ՇՈՒԾ.— Բո՛յր, փարատէ՛ տխուր մտածումներդ. եթէ իսկ մեռնիլ վիճակի անոնց, փա՛ռք է մեզ համար, վասնզի Ազգին և Եկեղեցիին համար զոհուած պիտի ըլլան: Բայց ես կ'աղօթեմ որ Աստուած պահէ անոնց արեւը Հայաստանին և ո՛չ թէ մեզ համար:

(Ժուկկի գալով)

Հայրենիքի պաշտպան հզօր Աստուած, օգնէ՛ մեր փոքրաթիւ բանակին. խորտակէ՛ թշնամիին անեղ զօրութիւնը որ կ'սպառնայ ջնջել քու Ս. Կրօնքդ. զօրավիգ եղի՛ր քու ամենազօր Աջովդ և արիացո՛ւր մեր հայրերուն ու եղբայրներուն բազուկները. թո՛ղ յաղթութեան աւետիսը արձագանգեն մեր լեռները. թո՛ղ թշնամին տեսնէ մեր հաւատքին փառքը և քու զօրութիւնդ:

(Գլուսեմ կ'երգեն, ազատութեան այն վառ սեր)

Տ Ե Ս Ի Լ Ք.

ՆՈՅՆՔ ԵՒ ՆՈՒՆԻԿ

(Նուկիկ աջ կողմէն զգուսութեամբ կը մտնէ)

ՎԱՐԴ.— Ի՞նչ կայ, Նունի՛կ, բարի՛ ըլլայ:

ՆՈՒՆԻԿ.— Բարի՛ է, Տիրուհի, Օրիորդ Աստղիկ Մոկացին եկած է և կ'ուզէ տեսնել Ձեզ:

ՇՈՒԾ.— Ա՛հ, մեր Հօր մտերիմ բարեկամին աղջիկը ներս հրամցուցէ՛ք զինքը:

ՎԱՐԴ.— (Շուկանիկին) Արդեօք պատերազմի ճա կատէն լու՞ր ունի մեզ հաղորդելիք: (Նուկիկ կ'երթայ)

ՇՈՒԾ.— (ղիմաւորելով) Բարի՛ եկաք, բարի՛, սիրելի՛ բարեկամուհիս:

ՎԱՐԴ.— Բարի՛ ըլլայ գալուստդ, լա՛ւ էք:

ԱՍՏՂ.— Պատիւ ունիմ Ձեզ ողջունելու, ազնի՛ւ Տիրուհիներ ինչպէ՞ս էք:

ՎԱՐԴ.— Շնորհակալ եմ, Օրիորդ, լա՛ւ պիտի ըլլանք. եթէ պատերազմին վրայ բարի լուր մը առնենք, արդեօք դուք բան մը գիտէ՞ք:

ԱՍՏՂ.— Նոր բան մը չեմ գիտեր, բայց սա գիտեմ միայն որ Ազգին մէջ ոգեւորութիւնն ու խանդավառութիւնը գալաթնակէտին հասած են. քիչ մ'առաջ դուրսը խրախուսիչ երգեր կ'երգուէին, հարկաւ դուք ալ լսեցիք:

ՇՈՒԾ.— Այո՛, յեցինք. մեծ ոգեւորութեամբ կ'երգէին. կարծեմ թէ խումբ մը երիտասարդներ և պատանիներ էին երգողները՝ խրախուսելու համար պատերազմի գացողները:

ԱՍՏՂ.— Այո՛, տեսնել կ'արժէ թէ ի՞նչ մեծ եռանդով ու հայրենասիրական խանդով կ'երգեն. եղբայրը հզօր հրաւէր կը կարգայ՝ պատերազմի դաշտը վազելու, հո՛ն ուր Քաջն Վարդան իր հազարաւոր նիզակա-կիցներով կը ճակատի անօրէն պարսիկներուն դէմ:

ՎԱՐԴ.— Ո՛հ, սիրտս կը դողայ, հոգիս տաղնապի մէջ է. չար ոգի մը կարծես չարաշուք լուրեր կը հծծէ ականջիս. չեմ կրնար յաւատեալութեամբ մեկնել այդ բոլորը, ամէն ինչ որ կ'անցնի կը դառնայ մեր շուրջը, անօրինակ ոգեւորութեամբ:

ԱՍՏՂ.— Ընդհակառակը, ես շատ յուսալից եւ լաւատես եմ. միթէ չէ՞ք տեսներ, երիտասարդներէն ըսկսեալ մինչեւ ծերունիները՝ հայրենասիրութեան եւ Ս. Կրօնի ինչ մեծ եռանդով վառուած բոլորքած են:

ՇՈՒՇԱՆ.— Ապրի՛ն մեր քաջերը, կեցցէ՛ մեր Ս. Հաւատքը, ծաղկի՛ն մեր Արքայան Տաճարները:

ԱՍՏՂ.— Տեսնելու էք թէ ինչպէս ծերունիները իրենց զաւակները խրախուսելով՝ անոնց սուրբն ու ասպարները իրենց ձեռքերով անոնց մէջքը կը կապեն եւ կը զրկեն պատերազմի դաշտը: Ինչպէ՛ս մայրեր իրենց զաւակները կը յորդորեն մասնակցիլ հայրենի Ս. Հաւատքի կոխին. նոյն իսկ կիներ իրենց ամուսիններէն կամաւ եւ սիրով կը բաժնուին՝ Հայրենիքի սիրոյն եւ կրօնի ազատութեան համար յանձն առնելով ամէն զրկանք եւ նեղութիւն:

ՇՈՒՇ.— Սիրելի՛ Աստղիկ, որքա՛ն կը փափաքեիս ես ալ այս հոգեւոր պատերազմին մէջ՝ մեր եղբայրներուն կողքին կռուիլ վատչուէր Պարսկին դէմ, եւ արիւն թափել Հայրենիքի եւ Կրօնի Ս. դատին համար:

ԱՍՏՂ.— Քու տեղդ քու Հայրիկդ՝ մեր քաջ զինուորներուն անվեհեր առաջնորդը կը կռուի. ան Հայրենիքի փառքն ու պարծանքն է: Աստուած անոր կեանքն ու արեւը յարատեւ պահէ:

ՇՈՒՇԱՆ.— Գոնէ անոնց մօտ ըլլայինք, որպէսզի կարենայինք ծառայել անոնց պէտքերուն եւ մխիթարել զիրենք՝ իրենց վերքերը կապելով:

ԱՍՏՂ.— Այո՛, երբ կարգը գայ, անշուշտ մենք ալ պէտք է նետուինք արիւնի դաշտը, եւ ցոյց տանք թէ՛

Հեղինկներու, Սանդուխտներու, Աշխեններու, Խոսրովիդուխտներու հաւատքն ու արիւթիւնը չեն մեռած մեր հոգիներուն ու սրտերուն մէջ:

ՎԱՐԴ.— Այդպէս եղած են անցեալին մէջ ալ եւ այդպէ՛ս պէտք է ըլլան միշտ Հայահինները ամէն պեղ: Եւ այս ազգը երբեք չի մեռնիր, ցորչափ իր մէջ ունեւնայ անձնուրաց Հայահիններ, որոնք պատրաստ ըլլան հայորդիներու նման կռուիլ՝ Հայրենիքի եւ Ս. Հաւատքի պաշտպանութեան համար: (այս միջոցին նկատեց կ'երգուի «Վարդա՛ւ մեր Բաջ Զօրավար»...):

ԱՍՏՂ.— Լսե՛նք, մեր քաջ զինուորներն են որ կ'երգեն... (նկատեց աղաղակներ, «կեցցէ՛ Վարդան մեր Բաջ Զօրավար»...):

ՇՈՒՇԱՆ.— Օ՛ն ուրեմն, երթա՛նք մեր եղբայրները խրախուսելու եւ անոնց օրինակէն խրախուսուելու:

ԱՍՏՂ.— Ապրի՛ն մեր քաջերը, արիւնա՛ն անոնց բազուկները՝ պարսիկ ամբարտաւանութիւնը խառնարկեցընելու համար:

ՇՈՒՇ.— Կեցցէ՛ն արի մեր մարտիկներ՝ Հայաստանի փառքին համար:

Ետզթանակէն թո՛ղ Հայ քաջեր՝ Մեր Ս. Կրօնի դատին համար:

(կը մեկնին աւեհնով դէպի աջ)

Տ Ե Ս Ի Լ Ք.

ՀԱՅՐԵ ՈՒ ՈՐԴԻՆ

ՈՐԴԻՆ.— Հայրի՛կ, կը խնդրեմ որ ինձ ըսես, այսօր ինչո՞ւ ամէնքը կարմիր հագած են եւ հանդէսներ կը կատարեն. ամէն տեղ սովորականէն աւելի խանդավառութիւն կը տիրէ:

ՀԱՅՐԵ.— Հոգի՛ս, ընդհանուր Հայաստան ծիրանե-

գոյն ներկուած է, քարնաւային երփնեբանդ դեղեղի/ ծիրանին զգեցած է: Բնութեան այդ հրաշագեղ համայնապատկերին մէջ ամէնէն զօրաւոր և փայլուն գոյնն է կարմիրը: Տե՛ս, պարտէզները կարմիր ծաղիկներով զարդարուած են. ծիտերը ի՞նչ ուրախութեամբ կը ճրուռողեն, կարծես անոնք ալ մեղի պէս տօն և հանդես կը կատարեն՝ իրենց զուարթագին երգերը հնչեցնելով:

ՈՐԴԻՆ.— Իսկ դուն, Հայրի՛կ, դուն միայն տրիսթեամբ համակուած ես, Կէմքիդ վրայ ուրախութեան նշոյլ մը չեմ տեսներ:

ՀԱՅՐԸ.— Այո՛, որդե՛ակ, ուրախ չեմ. ինչո՞ւ ծածկեմ. զիս տխրադէմ կը տեսնես, վաճնդի՛ երբ Հայաստան այսօր արեան կարմիր դաշտի փոխուած է և իր որդիները կը հրաւիրէ այդ դաշտին վրայ կանգնած արեան աւազանին մէջ մկրտուելու, երբ սեր քաջ Սպարապետը կարմիրն Վարդան ալ այդ արեան մկրտութեան քարոզը կը հնչեցնէ, ինչպէս նախաշաւիղ և կարապետն Մկրտիչ, ե՛ս, օրուան այդ հանդիսութեան մէջ ո՛ւնէ բաժին չունիմ:

Օրուան կարմիրը իմ աչքերուս մէջ արիւնի կը փոխարկուի: Այս արեան հանդէսը զոհերու արիւնով կը նուիրագործուի: Ազգ, Հայրենիք, Եկեղեցի և Ս. Հաւատ բռնաւորին ճիրաններէն արիւնով, արիւնով՝ կաշատուին: Ա՛ւազ...

ՈՐԴԻՆ.— Հայրի՛կ, հայրի՛կ, մի՛ տխրիր, ես արիւնս չեմ խնայեր, Ազգիս համար կը զոհուիմ:

ՀԱՅՐԸ.— Ապրի՛ս, որդի՛, մօտեցի՛ր, համբուրեմ քեզ (կը համբուրէ): Հայրենիքը այլեւս որբ չի՛ մնար, քանի որ ունի քաջ որդիներ քեզի պէս:

(Վարագոյրը կ'իջնէ)

Խմբերգ, (Վառլան մեր քաջ զօրավար)

ՄՐԱՐՈՒԱԾ Բ.

(Տեսարանը նոյնն է, ջաղաւարին նախագաւիթը)

Տ Ե Ս Ի Լ Ա.

ԱՍՏՂԻԿ (առանձին)

Ո՛հ, սոսկալի՛ երազ, չարագուշակ յայտնութիւն լի, սև բօթի մը յայտարար նշանը... չեմ կրնար վայրկեան մը վաճել հոգիիս խռովքն ու փոթորիկը... որո՞ւ դիմեմ... ի՞նչ ընեմ... ո՞վ կրնայ արդեօք ստոյգ մեկնութիւն մը տալ այս տեսիլքիս, որ անաւոր վտանգի մը նախանշանն ըլլալ կը թուի... Մասիսի գագաթէն վեր բարձրացող թանձր ծուխը... բոցափայլ կրակը, և աստղի մը երկինքէն վար սահիլը... ի՞նչ կը նշանակեն արդեօք... Ո՛հ, սիրտս կը տրոփէ, հոգիս կը ճմլուի... արդեօք Վարդանոյ և Շուշանիկ կրնա՞ն մեկնութիւն մը տալ այս երազիս... բայց ի՞նչ կ'ըսեմ. եթէ անոնք իմանան, անշուշտ գէշ մեկնութիւն մը պիտի տան. տրդէն անոնց սիրտը մեծ դողի և տագնապի մէջ է իրենց Հօր՝ Քաջ Սպարապետին համար... Ո՛հ, ո՛չ, պէտք չէ իմացնել ո՛չ մի բան, կարելի եղածին չափ պէտք է զգուշանալ նոյն իսկ տխուր գուշակութիւններու առիթ տուող խօսքերէ և կասկած ներշնչող ակնարկութիւններէ՝ անոնց փափուկ սիրտերը թունդ չհանելու համար:

Տ Ե Ս Ի Լ Բ.

ԱՐՏԱՆՈՅՇ, ԱՍՏՂԻԿ

ԱՐՏ.— (Խօսելով կուգայ աջ կողմէն առանց նշանա-

րելու Աստիկը՝ որ խոր մեծաման մեջ կ'երեւի) Ինչ ա-
հաւոր զփառողութիւն մեր Հայրենիքին համար... խեղճ
Հայաստան, կարծես բաւական չէր շէ տարիէ ի վեր իր
արքայական փառքէն զրկուիլը հիմակ ալ անհաւատ
Պարսիկը կը փորձէ կրօնական փառքէն զրկել զայն
ծուլելու համար իր մէջ աւերող Սզգոր, որ այսչափ տա-
րիներէ ի վեր իր գահին և պետութեան հաւատարմարար
կը ծառայէ... :

(Տեսնելով Աստիկը) Ներեցէ՛ք համարձակութեանս,
չափազանց անքաղաքավարութիւն էր ըրածս. չէի գի-
տեր Ձեր հոս ըլլալը. կ'ուզէի սպասել որ Ազնուաշուք
Տիկին Դատրիկ գար, և ես կարենայի պատերազմի մա-
սին լուր մը առնել իրմէն, որովհետեւ երկու եղբայր
ունիմ, երկուքն ալ պատերազմի դաշտը գացած են և
տակաւին ո'ւէ լուր մը չունինք. խեղճ ծերունի հայրս
չատ մտաւոր է, թէ և այնքան չի մտածեր իր որդիներ
ուն վրայ, որքան Ազգին և Հայրենիքին վրայ :

ԱՍՏՂԻԿ. — (մեկուսի) Խեղճ աղջիկ, Հայուն սև
ճակատագիրը եղած է միշտ տառապիլ և չարչարուիլ :

ԱՐՏ. — Կրնամ գիտնալ թէ որո՞ւն առջև գտնուե-
լու պատիւն ունիմ :

ԱՍՏՂԻԿ. — Մոկացի Արտակ իշխանին դուստրը՝
Աստղիկն եմ :

ԱՐՏ. — Ծնորհակալ եմ, ագնիւ իշխանուհի, կը նե-
րէք յարգանքի պակասութեանս :

ԱՍՏՂԻԿ. — Մի վրդովի՛ք, Օրիորդ, կը հաճի՛ք
դուք ալ յայտնել ինքզինքնիդ :

ԱՐՏ. — Անգղիի Լեոնի դուստրը՝ Արտանոյշ :

ԱՍՏՂԻԿ. — Ուրախ եմ, Օրիորդ, հրամեցէ՛ք նըս-
տեցէ՛ք և խօսեցէ՛ք ինչ որ գիտէք կամ կը լսէք :

ԱՐՏ. — Ինչպէս ըսի, ես կ'ուզէի լուր առնել պա-
տերազմի ընթացքին վրայ :

ԱՍՏՂԻԿ. — Պատերազմը գեռ չէ սկսած, Օրիորդ :

քայց Հայերու եռանդն ու ոգեւորութիւնը չատ մեծ է :
Վարդան մեր քաջ Սպարապետը անմահ արիութիւն
և դիցազնական ոգի ցոյց կ'ուտայ, իր օրինակը բաւա-
կան է ամբողջ բանակը Հայրենիքի և Կրօնի սուրբ
գրակով վառելու :

ԱՐՏ. — Օրհնեալ ըլլան Վարդան և իր քաջ նի-
շակակիցները, անոնք հայրենիքի փառքն ու պսակն են.
անոնց հետ են մեր պատուական Հոգեւոր Հայրերը՝ Յով-
սէփ Կաթողիկոս և Ղեւոնդ Երէց, որոնք իբրեւ քաջ և
անձնուրաց Հովիւներ կ'առաջնորդեն իրենց Հօտին՝ Հայ
Ժողովուրդին և զինուորներուն : Բանակը համակ աւիւն
խանդ ու եռանդ զգեցած՝ կազմ ու պատրաստ կ'սպա-
սեն հրամանի :

ԱՍՏՂԻԿ. — Դո՛ւն, Օրիորդ, անշուշտ տեղեակ
կամ ակնատես եղած ես Անգղիի պատահարներուն և
հոն պարզուած սրտառու տեսարաններուն :

ԱՐՏ. — Այո՛, ես ինքս ակնատես եղած եմ եր-
կու սրտաշոյղ տեսարաններու :

ԱՍՏՂԻԿ. — Պատեցէ՛ք Օրիորդ, ինչ որ գիտէք,
չատ կը հետաքրքրուիմ մեր ժամանակի գիւցազնական
պատմութեան զուգանքերով :

ԱՐՏ. — Պաշտելի՛ իշխանուհիս, հո՛ն պէտք էիք
ըլլալ՝ անձամբ տեսնելու և զգալու համար տեսարա-
նին վեհութիւնը, որ պարզուեցաւ Անգղիի մէջ, երբ
առաջին անգամ Պարսից զօրքն ու մոգերը իրենց մոգ-
պետին և ուրացեալ նախարարներուն հետ գալով՝ ի-
րենց բանակը դրին, Ժողովուրդը ամէն կողմէ խռնուե-
ցաւ ուրացեալները գիտելու. նոյն իսկ նախարարնե-
րուն ազգականներն ու բարեկամները եկած էին. ա-
նոնցմէ ոմանք կը յանդիմանէին զիրենք իրենց ամօ-
թայի ուրացութեանը համար : Նախարարներու կիներն
ալ եկած՝ կուլային կ'ողբային և անէծք կը կարդա-
լին. իսկ պատիկները կը փախչէին իրենց հայրերուն քո-

վէն՝ երբ անոնք կուգէին գրկել և համարուել զիրենք. անոնք չէին ուզեր նոյն իսկ իրենց հայրերուն երեսնէրը տեսնել: Ո՞ր սիրտ կրնայ հանդուրժել այս յուզիչ և ազնւարար տեսարանին, շատեր փղձկած՝ հաղիւ կրնային իրենց արցունքները զսպել: Իսկ նախարարներուն կըրած հոգեկան խռովքն ու ներքին զայրոյթը կարելի չէ նկարագրել:

ԱՍՏՂԻԿ. — Արդարեւ շատ յուզիչ տեսարան է այդ. Հայր ըլլայ և ջրգուիլ, մայր ըլլալ և հանդուրժել, ամուսիններ ըլլալ և լուելու համակերպիլ, ինչպէ՞ս կարելի է:

ԱՐՏ. — Ասիկա տեսարանին ողբերգական և ցնցող դրուագն է. իսկ խրախուսիչ և գիւցազնական արարուածը պարզապէս հիանալի է: Գիրակի օր մըն էր. երբ մոզպետը և մոզերը փորձեցին յարձակում մը դրածել Անգլի եկեղեցիին վրայ, ուր Ղեւոնդ Երէց կը պատարագէր. անոնց նպատակն էր հայկական տաճարները կործանել և անոնց տեղ կրակատուններ հաստատել: Հաջիւ թէ անոնք մոզպետին առաջնորդութեամբ եկեղեցիին դուռը հասած էին, Հայերը Ս. Ղեւոնդի և անոր օգնական քաջ եկեղեցականներուն օրինակէն խրախուսուած՝ միահամուռ յարձակեցան անոնց վրայ: Եւ փայտերով ու քարերով անոնց գլուխները պատռելով՝ լեզապատառ փախուցին, այնպէս որ մոզպետը սքանչանալով Հայոց կրօնական միարանութեան վրայ՝ յայտը կտրեց բռնութեամբ Հայերը Յազկերտի կամքին հնազանդեցնելէ:

ԱՍՏՂԻԿ. — Ահ, ո՞ր էր թէ միեւնոյն արիւթութեամբ և ոգիով այս մեծ պատերազմն ալ մղէին լեւր հայրերն ու եղբայրները, ցոյց տալու համար թշնամիին իրենց հաւատքին զօրութիւնը և քաջութեան մեծութիւնը:

ԱՐՏ. — Ես յուսալից եմ որ այսպատերազմ մը իր լա-

ւագոյն արդիւնքը պիտի տայ, քայքայ կը վախճամ որ մեր կորուստն ու զոհը մեծ ըլլայ:

ԱՍՏՂԻԿ. — Ո՞վ կը մտածէ սասնկ մամանակի մէջ զոհին մեծութեանը վրայ:

ԱՐՏ. — Այս պահուն երեւակայութեանս տուչեւ կուզան երկու երիտասարդ եղբայրներս. ի՞նչ պիտի ըլլան արգեօք. պիտի տեսնե՞մ անոնց յաղթական վերադարձը... ո՞չ... ծերունի հայրս ինչո՞վ պիտի մխիթարուի, երբ անոնք երկուքն ալ այլեւս չդառնան:

ԱՍՏՂԻԿ. — Դուն երիտասարդ եղբայրներ ունիս. ես ունիմ որդեւէր Հայր մը՝ Արտակ Մոկացին, Վարդանի մտերիմն ու սրտակիցը: Ի՞նչ պանծալի մահ և սրտխիւ երանութիւն պիտի ունենան, եթէ անոնք զոհուին մեր լոյս հաւատքին և Սուրբ Հայրենիքին համար: Հայրենիքի սէրը և կրօնի ջերմհաւանգութիւնը կը պարտադրեն մեզ զոհել մեր ամէնէն թանկագին և պաշտելի բաները:

ԱՐՏ. — Ծի՛շդ է, Վեհա՛ղն Օրիորդ, իրաւունք ունիս. մենք հայրենիքով պիտի մխիթարուինք և հայրենիքը մեզմով, անոր համար պէտք է զոհել ամէն ինչ, ամէն ինչ:

Տ Ե Ս Ի Լ Փ.

ՆՈՅՆՔ, ՎԱՐԴԱՆՈՅՇ ԵՒ ՇՈՒՇԱՆԻԿ

(Տալաւառէն դուրս կուգան)

ԱՍՏՂԻԿ. — Ահաւասիկ Օրիորդ, Տիկին Դատրիկի երկու սիրտուն հարազատները կուգան. կրնաս անոնց հետ ալ տեսնուիլ:

ԱՐՏ. — Ամենայն սիրով (եւկուրց միտաին կը դիմաւորեն ուղղուելով գեղի տալաւառը):

ԱՍՏՂԻԿ. — Բարե՛ ըլլայ Զեր գալուստը, Ազնիւ Տիրուհիներ:

ՎԱՐԴ. — Բարձր տեսութիւն:

ԱՍՏՂԻԿ. — Ձեզ կը ներկայացնէ՛ք Անգղիոյ Լեւոնին զուտորը՝ Օրիորդ Արտանոյ, որ եկած է պատերազմի մասին լուր առնելու:

ԱՐՏԱՆՈՅՇ. — Պատիւ է ինձ ողջունել Ձեզ, հա-
րազատ զոյգերը վեհաշուք Տիկին Դատրիկի:

ՎԱՐԴ. — Շնորհակալ եմք, Օրիորդ, մենք ալ լուրի
կ'ստանանք մեծ անձկութեամբ. տակաւին տեղեկու-
թիւններ չկան. միայն այսչափ գիտենք որ գիտ պատե-
րազմը չէ սկսած. երկու կողմէն ալ պատրաստութիւններ
մեծ փութով առաջ կը տարւին և մօտ է յարձակումը.
սիրտս կը տրոփէ, ամէն անգամ որ պատերազմի խօս-
քը կ'ըլլայ Տխուր իրականութեան մը հեռագատկերով
հօգիս կը վրդովի. ինչ վիճակ է այս և ինչ պիտի ըլ-
լայ վախճանը, չեմ գիտեր:

ԱՐՏԱՆՈՅՇ. — Աստուծով բարի է, Տիրուհի, հար-
կաւ մեր ազգին կրած այսքան տառապանքներն ու
փորձութիւնները վերջ պիտի գտնեն և անոր ցոյց
տուած համբերատար ոգին ու առաքինութիւնը պիտի
վարձատրուին:

ԱՍՏՂԻԿ. — Մեծ են Աստուծոյ սքանչելիքները.
յուսանք և ապաւինինք Անոր ամենակարողութեան,
բայց նաև չթերանանք մեր ազգային և հայրենասիրա-
կան պարտականութիւններուն մէջ. թո՛ղ Սասանեան
ազգը տեսնէ մեր հաւատքին ամրութիւնը և անոր ան-
պարտելի զօրութիւնը:

ՇՈՒՇԱՆ. — Մեծ է յոյսս թէ վերջապէս կրակը
պիտի խոնարհի Խաչին պատուանդանին առջև, և բո-
նութեան ու անարդարութեան ամբարտակները պիտի
խորտակուին ու փշուրին Արդարութեան և ճշմարտու-
թեան յաղթանակով: (ղուրսէն աղմուկ) Լուենք... հայ
զինուորիւր են, թերեւս լուր մը կամ աւելի յոյսալին
աւետիս մ'ունին տալիք:

ՏԵՍՍԵՆԻ.

(Երկու զօրականներ կը մօտենան ձախակողմէն
եւ խոնարհելով կը կենան)

ՇՈՒՇԱՆ. — (Անհամբեր) Ի՞նչ լուր, եղբայրներ, ան-
շուշտ պատերազմի դաշտէն կուգար:

Ա. Զօր. — Ուղղակի բանակէն. Ուրախութեամբ
է՛լաւեամ Ձեզ որ 66000 բնութեալ քաջեր կազմ և պատ-
րաստ են գրոհ տարու թշնամւոյն վրայ: Մեր բանակին
ոգեւորութիւնն ու բարոյական կերտվը խիստ մեծ է և
հրաշալի:

ՎԱՐԴ. — Աստուած զօրավիղ ըլլայ անոր:

Բ. Զօր. — Ես ալ կը հաստատեմ Հայ բանակին մէջ
ախրող անսահման խանդավառութիւնը, մանաւանդ մեր
Բաջ Զօրավարին արիական կեցուածքը. ա՛հ, Վարդանը,
Հայ բանակին վեհ Ախոյեանը հա՛ւակ աւիրն դարձած՝
կը վառէ, կը խրախուսէ, կը հրահանգէ, կը կարգաւորէ...
Անէ՛ծք ուխտադրուժ Վասակին, որ սրտով ու հօգիով Պար-
սից պիղծ ազանդին փարած և Սասանեան Պետութեան
կեզծ խոտու մներէն չլացած՝ անոր նենգամիտ քաղա-
քականութեան կոյս գործակիցը եղաւ. դաւաճանեց իր
ազգին և բաժնուեցաւ անոր միարանութենէն՝ իրմով մոլոր-
ած ուխտանենդ նախարարներու հետ. և ահա կը ծառայէ
վատաւոր պարսկական բանակին մէջ՝ ընդդէմ իր ազ-
գին, իր անձնական փառասիրութեան տեսչը յագեցնե-
լու նպատակով: Սատակե՛մ զաւաճանին և յաւիտե-
նական նախաւիրն իր ամօթապարտ ճակատին:

Ա. ԶՕՐ. — Մառի ճճին ծառէն է, չար թշնամին
տունէն է. վո՛յ այն առնմին, այն ազգին՝ որուն մատ
նիւն ազգէն է... Բայց մենք Վասակին զիւսց՝ Վար-
դանն ունինք, անարգ փուշին դէմ՝ պատուական վարդ:

ՇՈՒՇԱՆ. — (մեկուսի) Ա՛խ, հայրիկս, աննման
հայրիկս, ինչո՞ւ ես ալ իրեն հետ չըլլայի...

Ա. 20Բ. — Վարդան ինքը՝ ամբողջ ժողովուրդն է՝
 Վարդանը ժողովուրդի հոգիին արտայայտութեան ծնունդն
 է, Վարդանը ժողովուրդի մարմնացած բողոքն է, բողոք
 բռնութեան դէմ, բողոք՝ անարդարութեան դէմ, Վար-
 դանի անձնատուութեան մէջ (բացառ) է կղերը, անոր
 հետ միացած են ազնուականը, քաղաքացին և նոյնիսկ
 հայ կիւր:

Եթէ կուզէք, պատեմ ձեզի՝ անոր իր զօրական-
 ներուն խօսած ճառը, որ նոյն ստեղծարարական կոչն էր:

ԱՍՏՂԻԿ և ԱՐՏԱՆՈՅԸ. — (Վիտսին) Ըսէ՛ք պատ-
 մեցէ՛ք, սիրով մտիկ կ'ընենք:

Ա. 20Բ. — Քաջ զօրականներս, բաւաւ ան. «Մենք
 շատ պատերազմներու մէջ մտած ենք, երբեմն մե՛նք
 յաղթած ենք թշնամիներուն և երբեմն ալ յաղթուած
 ենք, բայց շատ անգամ մե՛նք յաղթող եղած ենք, քան
 թէ յաղթուած:

«Մենք մինչև հիմա կռուած ենք անցաւոր թագա-
 ւորին հրամանով՝ մեր անձնական փառքին ու պար-
 ծանքին համար, որովհետև ո՛վ որ քաջութեամբ կռուէր
 և յաղթական ելլէր, անցաւոր և մահկանացու թագա-
 ւորէն մեծամեծ պարգևներ կ'ստանար, և բնականա-
 ռակը, ո՛վ որ վատաբար փախչէր, թագաւորէն անգթա-
 բար կ'սպաննուէր:

«Ես այդ քաջութիւնները և այն շատ մը պար-
 գեւները անարգ և անօգուտ կը համարիմ, որովհետեւ
 անոնք ամէնքն ալ անցաւոր են: Հիմայ մենք պիտի
 կռուինք ո՛չ թէ մահկանացու թագաւորին՝ ալ մեր ան-
 մահ թագաւորին համար: Ուրեմն՝ ո՛րչափ ա ելի մեծ
 քաջութեամբ պէտք է կռուինք, վասնզի շատ ալ ապ-
 րինք և ծերանանք, դարձեալ պիտի բաժնուինք այս
 մահկանացու մարմինէն և պիտի երթանք կենդանի
 Աստուծոյ մօտ, որմէ ալ պէտք չէ բաժնուինք, և որ
 պիտի դատէ ամէն մարդ իր գործերուն համեմատ:

Այս խօսքերէն ետքը աւելցուց ան.

«Ո՛վ քաջ նիզակակիցներս, դուք որ շատերդ քաջու-
 թեամբ և աստիճանով ինձմէ բարձր էք, բայց քանի
 որ ձեր կամքով և յօժարութեամբ զիս առաջնորդ և
 զօրագլուխ ընտրած էք, լսեցէ՛ք ինձ. «Հեթանոսնե-
 րուն բազմութիւնէն երբեք չվախնանք ու չսարսափինք,
 և մահկանացուներու սուբերուն դէմ՝ մեր թիկունքները
 չդարձնենք, որպէսզի Աստուծոյ օգնութեամբ, երբ յաղ-
 թութիւնը շահինք, անոնց զօրութիւնը խորտակենք՝ որ
 ճշմարտութիւնը բարձրանայ, իսկ եթէ հասած է ժամա-
 նակը, որ այս պատերազմին մէջ Ս. մահով մեր կեան-
 քը վերջանայ, ուրախ սրտով մեռնինք, միայն թէ մեր
 քաջութիւններուն մէջ վատութիւն չխառնենք»:

ՇՈՒՇԱՆ. — (Վարդանոյսին ուղղելով) Քոյր, ինչո՞ւ
 մենք ալ չմանկակցինք այս հոգեւոր պատերազմին,
 քանի որ մենք ալ նոյն հոգին կը կրենք, որուն մէջ
 կը վառին նոյն կրօնական սէրն ու զգացումը:

Բ. 20Բ. — Քոյրե՛ր իշխանուհիներ, ամէն տեղ՝
 սկսեալ նախարարներու չքեղ դահլիճներէն մինչև գիւ-
 ղական աղքատիկ խրճիթը, արթնցած է ազգասիրու-
 թեան վսեմ հոգին, արթնցած է նաև հայ կիւր, ան իր
 հրեշտակային կենսաբոյր շունչով աւելի՛ կը բոցավառէ,
 աւելի՛ կը բորբոքէ ժողովուրդին եռանդը: Ան թողու-
 ցած իր պաճուճանքը՝ մոռցաւ իր փափկութիւնը, և
 սիրով կը տանի զինուորի կեանքին խտութիւնները,
 թանկագին բեկեղներու փոխարէն՝ զգեցած է պատե-
 րազմիկի հագուստը. ոսկեհուռ մարգարիտներու փոխա-
 րէն՝ ան իր կուրծքը կը զարդարէ երկաթէ զրահով,
 գոհարեղէն պսակի փոխարէն՝ ան իր զլխուն վրայ ունի
 պղոճատեղայ սաղաւարտը: Ոսկի մատանիներու փոխան՝
 կը կրէ սուր, վահան, նիզակ, Ամէն ինչ տուաւ ան,
 ամէն ինչ շոնեց Հայրենիքը և Ազգութիւնը փրկելու
 համար:

2562
47

ԱՍՏՂԻԿ. — Փա՛ռք Ազգի՛ն, որ իր մէջ ճշմարիտ հերոսունիւններ ալ ունի. պատի՛ւ հա՛յ կնոջ :

Ա. ՉՕՐ. — Մենք կը մեկնինք զարծեալ մեր բա՛նակը՝ խուժը մը նոր կա՛ւարներով, կռուելու համար մեր եղբայրներուն հետ, և եթէ հարկ ըլլայ, մեր ա՛րիւնն ալ անոնց արեան հետ խառնելու :

Մա՛ք բարեալ, կը յուսանք քանի մ'օրէն, եթէ ո՛չ մենք, դուք պիտի տօնէք գաղափարի մե՛ծ յաղթա՛նակը և ամբողջ Հայութեան փրկութիւնը :

ՎԱՐԴ. — Երթա՛ք բարեալ. Քա՛ջ Զօրականներ, Աստուած Զեզ և Զեր բանակին ու անոր քաջ Սպա՛րապետին հետ ըլլայ :

ՇՈՒՇԱՆ. — (Տաղաւարի ճակէն դուռակը վար առնելով եւ երկարելով) Քաջե՛ր, ահա Զեզի կը ձօնեմ իրրեւ յաղթութեան նշանակ, այս գրօշը, զոր իմ ձեռքով գործած եմ. տարէ՛ք զայն իրրեւ Հայ կնոջ՝ Հայ ջրով մը ռազմատենչ իռգիին մէկ գրաւականը և յիշատակը, անով բարձր պահելու համար Հայ գիւղորականի քաջութեան պատիւը :

ԵՐԿՈՒ ԶՕՐԱԿԱՆՆԵՐԸ. — Կեցցէ՛ Հայ բանակը. թո՛ղ պանծա՛յ Հայ գրօշը... (կը մեկնին ամենքով, երկու գօրականները ձախէն. միւսները կը մնեն տաղաւարը)

(Բեմին լոյսերը մարած՝ կեօ մթութեան մը մեջ)

ԱՆԱՀԻՏ

(Իբրեւ Հայրենիքի պահապան ոգին՝ հայկական տաճարով կը ներկայանայ եւ կ'արտասանէ)

ՏԻԿՆԱՅՔ ՓԱՓԿԱՍՈՒՆԻՔ

Տիկնայք փափկասունք Հայոց Ասխարհին
Եկան ժողվեցան ու խորհուրդ արին :

— «Զը մընաց այր մարդ հայրենի երկրում.
Զը մընաց որդի մայրերի գրկում :

Սուրբ Հայրենիքը կանչել է նրանց,
Պուրս գալ կ'ստացանք բրեճամու դիմաց.
Առիւծների պէս կոռիլ ու մեռնել
Հայրենի հողը Պարսկից ազատել :

Դեաց ե՛ւ Վարդան ե՛ւ Վահան, Տաճաւ.
Դեաց ե՛ւ սրուկ ե՛ւ իշխան ազաւ.
Քոկ մենք մընացինք մեր պայտսներում,
Փափկասուն կեանքի անվայել գրկում :

Մեր դանիճները՝ ոսկեզօծ նախած.
Մեր զարաններ՝ շախմատ թրխած.
Հագնում ենք ոսկի օղեր. մանեակներ.
Մեռաւ ու կերպաս, քանկազին քաւեր :

Տիկնայք փափկասունք Հայոց Ասխարհին
Եկան ժողվեցան ու խորհուրդ արին.
— «Զը մընաց այր մարդ Հայրենի երկրում,
Զը մընաց որդի մայրերի գրկում :

Էլ ո՞ւմ համար են ոսկի ու արծաթ,
Էլ ինչո՞ւ հագնենք յակինթ, աղամանդ.
Էլ ո՞ւմ համար մենք հագնենք, զարդարու ենք,
ձոխ դանիճներում՝ էլ ո՞ւմն սպասենք :

Տիկնայք փափկասունք Հայոց Ասխարհին
Եկան ժողվեցան աղախիներին.
— «Առե՛ք այս ամենն ասացին նրանք,
Ոսկի, աղամանդ, ակն ու զարդարանք :

Տարե՛ք, ծախեցե՛ք վախճառներին,
Կիսով տուցե՛ք թէ զին չը տրին.
Կսաւ առե՛ք շուս, վիրակապ շինեք.
Վե՛րք զովացնող դեղեր շա՛ս առեք :

Եւ շուտ կարեցին բոլոր Հայ կուսանք
Հազար երեսուն վեցերի կապաճք.
Մի վայրկեանի մեջ կապեցին բեռներ
Եւ ժողովեցին առոյգ նրժոյցներ:

Հնչեց բամբուկ, երգեցին կոյսեր,
Ամեն մեկի ձեռք վալեց մի սուսեր.
Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին
Դեպի Աւարայր բռնան, սրլացի՛ն...

Ս. ՀԱՆՈՒՄԵԱՆ

(Վարադայրը կ'ըջնէ)

Պմբերդ (Թե Հայրենեաց պապկապիր)



ԱՐԱՐՈՒԱԾ Գ.

Տեսարանը կը ներկայացնէ նոյն նախագաւիթը. բայց տա-
ղաւարին դրան երկու դռները վաւ առնուած եւ անոր
մուտքը կարմիր վարագոյրով մը ծածկուած է:

ՏԵՍԻԼ Ա.

ՎԱՐԴԱՆՈՅՇ (առանձին)

Ո՛հ, չեմ կրնար վայրկեան մը հաշտուիլ այն շա-
րագուշակ շշուկներուն հետ՝ որոնք սկսած են ծաւալիչ
ժողովրդեան մէջ Աւարայրի Մեծ Ծաղկաւաճարտի մա-
տին, իբրեւ ազգանշանը՝ կարծես՝ այն տխուր հաւա-
նականութեան՝ որուն հետագա տկերը կը սոսկացնէ
զիս, երբ արդէն դառն նախազգացութիւններով պա-
շարուած է միտքս: Ի՞նչ պիտի ընեմ: Աստուած իմ,
երբ այս նախազգացումները իրականութեան փոխուին...
Ի՞նչպէս եւ ինչով պիտի մխիթարեմ մայրիկը, ինչպէ՞ս
պիտի կարենամ սփոփել Շուշանիկը, որ կ'ուզէր ընկե-
րանալ հօրս եւ մասնակցիլ անեղ պատերազմին... Ո՛հ
սե՛րեր, սե՛ ճակատագիր... Հայաստանի արեւը նորէն
պիտի աժդունի, Հայութեան սիրտը նորէն պիտի արիւ-
նի... Ի՞նչ եղբրական վախճան պիտի սնենան այն-
քան խանդավառութիւններ, այնքան դիւցազնական
մարտնչութիւններ... Ա՛խ, չեմ կրնար հանդարտիլ... Վե-
րահաս ազգային մը մզձաւանջը կը խոռովէ զիս... (յուզ-
ուած) սիրտս կը ճմլուի... Ե՛հ... (կ'իյնայ արտփն վրայ):

ՏԵՍԻԼ Բ.

ՇՈՒՇԱՆԻԿ, — (կամաց կամաց կը մօտենայ բռնոյր

հով) Բոյր, ի՞նչ հառաչանք էր որ լսեցի. ի՞նչ ռնիս. դարձեալ տրտում կը տեսնեմ քեզ:

ՎԱՐԴ.— Ոչ, ի՞նչ, ոչ, ի՞նչ, Շուշանի՛կ, միշտ նոյն յարագուշակ տխուր մտածումներու և մտալախութիւններու հետեւանք:

ՇՈՒՇԱՆ.— Այդ խռովքդ իմ ալ յոյսերս կը մըթագնէ, և զիս ալ հոգեկան տանջանքներու կը մասնէ: Մայրիկը մեզ իր քով կանչած է, երթանք տեսնել զինքը. թերեւս մայրիկին ներկայութիւնը փարատէ քու սեւ մտածումներդ:

ՎԱՐԴԱՆ.— Երթա՛նք, սիրելի Շուշանիկ, մայրիկը իննակ չը թողունք. ան մեզմով միայն կրնայ մխիթարուիլ: (Երբալու ոտեն մեկուսի) Ո՛հ... Աստուած իմ, արդեօք դժբաղդութեան մը գոյժը լսած է...:

(Կը մտնեն քաղաւար, բեմը կ'ամայանայ, լուսիւնը կը տիւր աղօս լոյսի մը ստուերոս խորհրդաւորութեան մեջ):

Տ Ե Ս Ի Լ Փ.

ԱՍՏՂԻԿ ԵՒ ԱՐՏԱՆՈՅՇ (կը մտնեն ծախ կողմեն)

ԱՍՏՂ.— (Պսակ ի ձեռքն) Փառքին և զիցադնութեան պատկն է որ կը ձօնենք քաջամարտիկ Զորավարներուն, ճշմարտութեան վեհ նահատակներուն, Բաջն Վարդանի, Կորովին Խորէնի, Արին Արտակի, Զարմանալին Տաճատի, Իմաստունն Հմայեակի, Հրաշակերտն Ներսէհի, Մանուկն Վահանի. Արդարն Արսէնի, Յառաջողէմն Գարեգինի՝ և 1036 մեծ Վկաներուն, որոնք ինկան Աւարայրի դաշտին վրայ: Ո՛վ Քաջդ Վարդան, անմահ Ախոյեան Ս. Եկեղեցւոյ, զո՛ւն որ յանուն Ս. Կրօնքի՝ քու առաքինի զինուորներուդ հետ զիցադնաբար պատերազմ մղեցիր կրապաշտ Պարսիկին դէմ, և Ազգդ ու Հայրե-

նիդդ ուրացութենէ ազատեցիր, օրհնեալ ըլլայ քու յիշատակդ. քու վեհանձն ոգիդ թող սաւառնի՝ միշտ այն Հայրենիքին վրայ՝ որ մարտիրոսներուն երկիրն է, և այն երկիրքին վրայ՝ որուն կամարին տակ Հայ աշուճը կը հնչէ. և Հայ եկեղեցին կը փառարանէ քու անունը. քու յիշատակդ: Քու Ս. Հաւատքդ և ազգապիտան եռանդդ վառէ՛, յորրօքէ՛ ամէն Հայու սրտին և հոգւոյն մէջ, և թո՛ղ քու արիւնդ հոսի՝ Հայուն երակներուն մէջ և արիացնէ՛ զայն իր փորձութիւններուն մէջ:

Ո՛վ լուսապսակ Մարտիրոսներ, դուք՝ որ ձեր քաջ և հայրենասէր Մեծ Առաջնորդին՝ Անմահն Վարդանայ հետ փառաց պսակին արժանացաք, ընդունեցէ՛ք Հայ մատաղ կոյսերու օրհնութիւններն, որ Ձեր Ս. յիշատակին կ'ընծայուին բոլորանուէր:

Ո՛վ երանելի Ս. Վկաներ, դո՛ւք որ Տղմուտը ներկեցիք Ձեր արեան վերջին կաթիլովն, և զայն մշտապէս Վկան ըրիք Ձեր սխրալի քաջագործութիւններուն, բարեխօսեցէ՛ք Ձեր լուսեղէն օթեւանին մէջ այն Ազգին համար՝ որուն անունով սուր ի ձեռքին ինչալ փառք համարեցիք:

Ո՛վ հայրենիքի նահատակներ, դուք որ երկնային աթոռը բարձրանալու տենչով մահուան դիմեցիք, հայրեցէ՛ք Ամենակալին պաշտպանութիւնն ու օգնութիւնը Հայ ազգին համար, որպէսզի զիմակալելով ամէն նեղութեանց, զրկանքներու և բռնութեանց՝ յաղթական հանդիսանայ և անընկճելի մեայ միշտ, անվթար պահելով իր Ս. Կրօնն ու Հաւատը:

Ո՛վ անմահ Հոգիներ, դո՛ւք որ Աւարայրի դաշտին վրայ Ձեր արիւնք թափեցիք և անոր կանաչութիւնը կառմիր գոյնով օծեցիք: Գառաւոր էջ մը գծելով պատմութեան համար, անմահ էք յաւէտ Ձեր յիշատակի արժանի գործովն, և անմահ ու անմոռանիլի պիտի մնաք Հայրենայ սերունդին մէջ դարէ դար:

Ձեր արեան ճապաղիքներէն վեր բարձրացող խնկարոյր անուշահոտութենէն զմայլող յաւիտենական Աստուածը՝ բա՛ւ համարելով մեր անհամար զոհերը, թո՛ղ հաճիր անհուն բարութեամբը վերջ դնել մարտիրոսութեան, և ընէ՛ յաւէտ փրկուած ժողովուրդ՝ իր անուան հաւատարիմ և մշտատե երկրպագու, և հարազատօրէն հետեւող առաքինի շաւղին իր նախնեաց՝ որոնք Հա՛յ ապրեցան և Հա՛յ մեռան:

Փա՛ռք և պաշտա՛նք Ձեր սիրալի յիշատակին:

ԱՐՏԱՆՈՅՇ. — Մասեաց գագաթ թո՛ղ գան բազմին գունդ գունդ հրեշտակներ, զի Աստուած իջեր է Հայաստան՝ Հայոց արիւնն հոտոտելու:

(Ներսէն կ'երգուի. «Մասեաց գագաթ քող գան բազմին, Երկնից գունդ գունդ հրեշտակներ, Աստուած իջեր ի Հայաստան. Հայոց արիւն հոտոտել...»):

Հոտոտէ՛, ո՛վ Աստուած, զի Ճշմարտութեան, Ազատութեան և Արդարութեան երբեակ բոյրն է ծաւալեր Տղմուտէն մինչև Արաքս, Աւարայրէն մինչև Մասիս: Բայց մի՛ մոռնար վարձատրութիւնը, ինչպէս անոնց՝ քիչ մը ևս աղցաւորներուն: Ու Հայը չպիտի՝ մոռնայ յաւէտ իր յիշատակելի փառքերէն մին, զէնքի, սրտի ու հոգիի փառքերէն է՛ն յիշատակելին:

Օրհնեա՛լ ըլլայ Վարդանանց յիշատակը:

Ազօթք մը ամէն բերաններէ որ «Աստուած շա՛տ Վարդաններ յարուցանէ»:

(Վարագոյրը կ'իջնէ)

Մեներգ. «Լոնց ամպերը...»



ԳԻՆՆ՝ 3 Ե.Դ.

